

ՀԱՆԴԷՍ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ



ՊՈՄՊԵԱՑԻ ՎԵՐՋԻՆ ՕՐՆ

(Այս քաղաքիս պղծմանց վրայ տես մանրամասն տեղեկութիւն մը 'ի Բազմովէպն 1856, Հտ. ԺԿ, էջ 233 և 282):

Հանդիսական օր մ'էր, Քրիստոսի 79 թուականին նոյեմբեր 23ին, որ վեսու վի սոսկալի բորբոքմամբը Պոմպէաքաղաքը գետնասոյզ եղաւ: Հնոց վկայութիւնը, անոր աւերակները, մխրոց և չեչաքարանց վրայէ վրայ դիզուած խաւերը որ վքաղաքը ծածկեցին, և ոսկերոտեաց մեռելոց յանկարծահաս օրհասին 'ի հոգեվարս ինկած դիրքը, այս

ամենը մեզի ականբեր և կը ցուցնեն այս դժբաղդութիւնը. երևակայութիւնը բան մը չի կրնար աւեցընել, հոն է անոր նկարագիրը, և մեր աչաց դիմաց է այն պատկերն: Ամիթիթէատրոնը նստած, մենք իսկ խոյս կու տանք առաջին սաստիկ յուզմանէն, առաջին փայլմանց՝ որ կ'ազդեն անոր բորբոքումը և կործանումը: Երկիրը շատ ան

գամ ցնցուեցաւ, և իբր փոշոյ թա-
 թառի մը նման, սաստիկ թանձրամած՝
 երկիրքը մրկեց: Քանի մ'օր առաջ,
 կ'ըսէին թէ հակայք երբեմն լեռան մէջ,
 երբեմն դաշտագետնի վրայ օդուն մէ-
 ջէն կ'անցնէին. հիմա ասոնք վեր բար-
 ձրացած կը կանգնին ծխոյ մրկեաց մէջ,
 ուր կը լսուի անսովոր ձայն մը, ահա-
 լոր մռնչիւն մը, ապա ետևէ ետև ա-
 հեղազոյ որոտմանց հարուածներ. և
 գիշերը վրայ հասաւ, գիշեր մը ար-
 հաւրաց. ընդարձակածաւալ բոցերով
 խաւարը կը հրկիզի, փողոցները ամեն-
 քը կ'աղաղակեն. « Վեսու վն է որ բռն-
 կեցաւ » . — Շուտ մը Պոմպէյացիք սոս-
 կացեալ և զարհուրեալք կը թողուն
 զամփիթէատրոնը, երանի իրենց՝ թէ
 որ զանեն դիմացին ելից անցք մը ա-
 ռանց խառնխուռն մէկվմէկ ճնշելու,
 և քանի մը քայլ անդին՝ քաղքին դռ-
 ներն և դաշար բաց, իւ սակայն, յետ
 առաջին բորբոքման, յետ կրակի մոխ-
 րոց հեղեղին, կը տեղոյ հրոյ հեղեղը,
 հրավառ և թեթև քարինք հովէն մը-
 դուած — իբր թէ ըլլար բոցավառ ձիւն
 մը — յամր և միանգամայն աղէտա-
 լից, առանց դադարման և ուշանալու
 և անողքբելի շարունակութեամբ իջնե-
 լով. այս հաստատուն բոցը փողոցները
 կը խնու, տանեաց վրայ կը գիզուի, և
 կը ծանրանայ տներուն վրայ հանգերձ
 կլմնտիրներով որ կ'այրին և գերաննե-
 րով որ կը բորբոքին. հրդեհն այսպէս
 յարկէ յարկ կը կործանէ տանց քա-
 ղայատակաց վրայ ուր կը գիզուին, իբր
 թէ հողը բաց փոսի մը մէջ լեցուէր,
 այս կարմիր ու այրեցող ձեան զնտիկ-
 ները, որ դանդաղ ու աղէտալի կեր-
 պով միշտ վար կ'իջնան:

Բնակիչք ասդիս անդիս կը վազեն
 աղատելու համար. յանդգունք, երի-
 տասարքը, անոնք որ կենաց կը փափա-
 քին, կրցան փախելու: Ամփիթէատրո-
 նին մէջ ՚ի քթթել ական մարդ չմնաց,
 բաց ՚ի սուսերամարտից որ մեռած էին:
 Բայց վայ անոնց որ խանութներուն
 մէջ, թատրոնի կամարակապներուն
 տակը և կամ ստորերկրեայ տեղուանք

ապաւինին, մոխիրը կը պատէ զանոնք
 և կը լողդէ: Մանաւանդ վայ անոնց
 զորս ագահութիւնն կամ ընչասիրու-
 թիւնը կարգելու, Պրոկուրոսի կնոջ,
 Սյալուստիոսի սիրուհւոյն և բանաստեղ-
 ծին տան մէջ եղած աղվանց որ ուշա-
 ցան իրենց ականակապ զարդերը ժող-
 վելու համար. այս զանազան զարդու-
 մէջ, իրենց չորս դին սփռուած, խեղ-
 զամահ կ'իջնան, որպէս զի պատմեն
 ապագայ դարերուն մէջ իրենց վերջին
 անհանդարտութեան ունայնութիւնը:
 Կին մը, Փաւոնայի տան կից վայրա-
 գաւթին մէջ կը վագէր գիպուածով
 ականակապ զարդերն ձեռքն առած.
 չկարենալով շունչ առնուլ, ապաւինած
 էր ներքնադաւիթը. ջանաց՝ բայց զուր
 տեղը՝ կոթնցընել բազուկները ձեղու-
 նի մը որ վրան կը փլչէր. ճգմուեցաւ
 անոր տակը, և ոչ ևս զանուեցաւ իրեն
 գլուխը:

Գերեզմանաց փողոցին մէջ ամբոխ
 մը մարդկանց իրարու զարնուեցան.
 ոմանք գեղէն ապաստանելով ՚ի քա-
 դաք, ոմանք ալ այրած բռնկած տնե-
 րէն փախելով՝ կու գային աղատու-
 թիւն խնդրելու բաց երկնքի տակ: Առ-
 ջիններէն մէկը երեսի վրայ ինկաւ ու
 տուըները գէպ ՚ի Հերքուլանուսի դու-
 ուր դարձած, ուրիշ մը կուըկի վրայ,
 բազուկները վեր վերուցած, ձեռքն ալ
 բռնած ունէր հարիւր քսաննեթմն ար-
 ծաթի դրամ և վաթսուն և ինն ոսկի
 դրամ: Ուրիշ մ'ալ նոյնպէս թիկանց
 վրայ ինկած, — արտաբոյ կարգի բան —
 անմենքն ալ մեռան վեսու վին նայելով:
 Կին մը, տղայ մը գիրկն առած, գերեզ-
 ման մ'ապաւինած էր, հոն հրոյ ժայթ-
 քումը պատ մը քաշեց վրան. զինուոր
 մը, հոււատարիմ իր պարտուց, Հեր-
 քուլանուսի դրան զիմաց կանգուն կե-
 ցած իւր պահակատեղին, մէկ ձեռքը
 բերնին վրայ դրած, միւսը նիզակին
 վրայ, այսպէս մեռաւ կտորձութեամբ:
 Դիոմեդէսի ընտանիքը միաբան ժող-
 վեր էին տանը ստորերկրեայք ուր ա-
 մենը մէկէն տասննեթմն անձինք, կա-
 նայք, աղայք և երիտասարդ աղջիկ մը՝

որուն պարանոցը մխիթին մէջ խրած մնաց, ամենքը զոհ եղան, կենդանւոյն թաղուեցան, իրարու պըլլուած, բռնաբար հեղձամահ սպաննուած, և կամ թերևս յամր սովամահով: Արրիոս Դիոմեդէս միայն ազատած էր, թողլով իւր տունը և միայն իւր գերին ունենալով հետը՝ որ քսակը բռնած էր, կայծակնահար կ'իյնայ իւր պարտիզին մէջ: Ուրիշ դժբախտից՝ որոնց վերջին վայրկեանքն գիտնանք, Իսիսի քուրմը, որ բացերով շրջափակեալ և չկարենալով հրդեհած փողոցին մէջէն ազատիլ, իւր կացինովը երկու պատ կը ծակէ, և երրորդ պատի մ'ալ հանդիպելով՝ անշուշտ ուժաթափ և կամ հրոյ հոսանքներէն գետինը ինկած, շնչասպառ կը մնայ՝ ինչուան ետքը ձեռքէ չթողլով իւր կացինը: Եւ այն կապեալ կենդանիները որ չեն կրնար փախչիլ, հացագործին ջորին, Ալպինոսի պանդուկին ձիերը, Սիրիկոսի այծը, որ կծկուած մը մնայ խոհանոցին փռան մէջ, որ մօտերս գտնուեցաւ իրեն վզէն կախուած բոժոժիկովը: Եւ սուեբրամարտից ձմերոցին մէջ բանտարկեալքը երկաթէ օղամանեակներով սրունքներն կապած ու կաշկանդած: Եւ Ջերմկանց քով երկու զեռահաս ամուսնաց կրկապակի մը մէջ տուած վերջին զրկախառնումը...

Ինչ սուսկալի գիշեր և ինչ վաղուեան օր: Առաւօաբը ծագեցաւ, բայց խաւարը կը մնայ. ոչ անյուսին գիշերուան մը խաւարը, այլ փակուած և անմահ սենեկի մը խաւարը: Ի Միսնն՝ ուր էր կրտսերն Պլինիոս, որ այս դժբախտ արկածիս նկարագիրն ըրած է, կը լըսէր տղայոց, մարդոց և կանանց ձայներ, որ իրարու ձայն կու տային, գիրար կը փնտռէին, ու գիրար չէին ճանչնար բաց 'ի մէկ մէկու ձայնէն, մահը կը կանչէին, կու լային և օրհասականաց պէս կը մնչէին, և կը կարծէին որ այս յաւիտենական գիշերն էր յորում մարդիկ ու աստուածք կ'օղջնանային: Ետքը այնպիսի թանձր մխիթր մ'իւնջաւ, որ հրաբլխէն եօթն մղոն հեռու

եղողն ալ հարկ էր անդանդազ վրայէն թօթուել զայն որպէս զի հեղձամղձուկ չըլլայ: Կ'ըսեն թէ այս մխիթը ինչուան Ափրիկէ գացեր է, և մինչև 'ի Հուովմ, ուր բոլոր օգը պատեղով՝ արեւը ծածկեց, այնպէս որ Հուովմայեցիք կ'ըսէին. « Աշխարհս է որ կը դառնայ. արեւը երկրիս վրայ ինչալու վրայ է որպէս զի մարի, և կամ երկիրս յերկինս կ'ամբառնայ՝ հոն բոցակիզելու համար »: « Վերջապէս, Պլինիոս կը գրէ, լոյսը կամաց կամաց սկսաւ նորէն դառնալ, ասողը որ կը սփռէ զայն՝ երեցաւ, բայց դեղին ինչպէս խաւարման տտեն կը հանդիպի: Ամեն բան մեր բոլորովը փոխուեր էր. մխիթը թանձր ձեան մը պէս՝ ամեն բան ծածկած էր »:

Անցեալ դարու մէջ այս ընդարձակ ծածկոցը քաղքիս վրայէն վերցուեցաւ, և աւերակաց պեղմունք պատմեցին զայս պատահարս այնպիսի ճարտասան լեզուով մը, որ ինքն իսկ Պլինիոս՝ իրեն ոճոյն գեղովն և վաւերական վկայութեամբ ալ չէր կրնար ստանալ: Այս ահաւոր աւերչին վրայ հասաւ յեղակարծուց, իւր գործած աւերակացը մէջ, իբրև յանցաւորի մը՝ յանցանքը գործելու ատեն: Այն անյարկ տները, կանգուն մնացած ինչուան առաջին յարկը, սիւնաշարքը, որոնց վրայ շէնք չի տեսնուիր, այն չորս կողմանէ բացուած տաճարները, առանց խոյակի և կամարակապ սրբահի, այն լուռ տառնձնութիւնը, այն ամայութեան, անձկութեան և յետին կարօտութեան կերպարանքը՝ որ հըրդեհի մը երկրորդ օրուան տեսարանի մը կը նմանի, այս ամեն բաներս բաւական է մարդու սիրտ տխրութեան մէջ ընկղմելու: Բաց ասոնցմէ, կան կամախը որ ամեն մէկ քայլիք կը հանդիպին այս գիւտից ճամբուն վրայ՝ մեռելոց մէջ, որ յայտնի կ'ընեն անոնց քաշած տագնապը և արհաւիրքը այն վերջին վայրկեանին: Արդէն ասոնցմէ վեց հարիւրի չափ և թերևս աւելի գտնուեցաւ, որոնց ամեն մէկուն երեսին վրայ նկարած կ'երեի սրտակտոր

գրուագ մը այս անհուն զժբաղդու-
թեան :

Յամին 1866 պզտի փողոցի մը փյա-
տակաց կոյտի մը մէջ, դարձաւ որք փո-
րելու աստենին դատարկ մաղի մը տե-
սան, որուն խորը կային մարդու ոսկե-
րոտիք : Շուտ մը կանչեցին Ֆիորելլի
ըստած երեւիլ հնագէտը, որ իրենց
գլխաւոր տեսուչն էր, որ մէկէն խե-
լացի բան մը 'ի գործ դրաւ : Գաճ հա-
լեցընել տուաւ ու թափեց այն տեղը
անոնց վրայ, և նայն գործողութիւնը
կրկնել տուաւ ուրիշ տեղուանք ալ ուր
կը կարծուէր որ գտնուին նման ոսկե-
րոտիք : Յետոյ խնամքով վերցընել
տուաւ սնկաբարի և քարացած միւս-
րին կոչկոռները՝ որ անոնց վրայ պըլ-
լուած էր՝ վերարկուի մը պէս, որով
կարողացաւ ուզածը գտնել : Վասն զի՝
այս նիւթերը վրանեցինէն վերցընելով,
չորս հատ դիակ մէջտեղ ելաւ :

Ամենքը կրնան տեսնել հիմա Պոմ-
պէայի թանգարանին մէջ այս զարմա-
նալի տեսարանն : Ասոնք արձանք չեն,
այլ մարդկային մարմինք թափուած 'ի
վեաւով : ոսկրոտիք հոն են, ու դա-
ճէ պատանոց մէջ պահպանուած նո-
րէն 'ի լոյս կ'իլան զորս ժամանակը պի-
տի փճացընէր, ու այն խոնձ մոխիրն
պահպանեց զգետտներն ու մարմինը :
Ոսկերաց մէջ ասդին անդին խորշիկներ
կ'երևան, ուր խանձաքարանց հոսան-
քը չեն կրցած հասնիլ : Ասոր նման բան
ուրիշ տեղ տեսնուած չէ : Եղիպտոս-
կան մամիաները անձածկոյթ, սևազոյն
և պժգալի են : մեզի հետ ամենեկին
հաւասարութիւն մը չունին : յուրտե-
նական հանգստեան համար՝ նուիրա-
կան դիրքի մը մէջ կեցած են : Բայց
զուրս հանած Պամպէայի դիակուները
մարդկային էակներ են որոց մահը կը
տեսնեցիք : Ասոնց մէջ կայ կնկան մը
դիակն, որուն քովէն ելաւ իննսուն և մի
դրամ, երկու քովթէ անոթ, բանալիք
և զոհարեղէնք : կը փախէր սա՝ հետը
տանելով այն թանկագին նիւթերը,
երբոր ինկաւ փոքր փողոցին մէջ : Դեռ
կը տեսնես զինքը ձախ կողմին վրայ

պատկած : աղէկ կ'որոշուի գլխուն վը-
րայի թաղհարը, զգեստուց հիւսուած-
քը, արծթէ մատանիք որ մատուրնե-
րուն վրայ դեռ կեցած են, ձեռքին մէկը
կորած է, ոսկերաց խորշաւոր կաղ-
մուածքը կը տեսնուի : ձախ թեղ վեր
վերցուցած՝ կը հակի : փափուկ ձեռքը
կարկամած է : կարծես թէ եղունգնե-
րը մարմնոյն մէջ մտած են : բոլոր մար-
մինը թուի թէ ուռած և կըմկըտած է :
միայն սրունքն՝ երկայն տարածուած
են : կ'իմանաս որ երկայն ատեն կուռ-
տած է այս սոսկալի նեղութեանց մէջ :
իւր գիւրքը հոգեվարքի զիւր մ'է, և ոչ
թէ մահուան :

Ասոր ետևի զին ընկած էին կին մը,
և դեռահասակ աղջիկ մը : աւելի
տարեցը, մայրը թերևս՝ էր ծննդեամբ
ուսմկաց կարգէն, մատը երկթէ մատ-
նի մը անցուցեր էր : ձախ սրունքը վե-
րամարձ ու ծալած, կը ցուցընէ որ
ինքն ալ մեծ նեղութիւն քաշած է,
բայց նուազ քան զազնուական տիկ-
նոջն : Անմիջապէս քովը, իբր թէ մի և
նոյն անկողնոյ մէջ, դեռահասակ աղ-
ջիկը պառկած է : մէկը գլխուն կողմը,
միւսը ոտքին : սրունքին իրարու
պլլուած են : Այս դեռահաս աղջիկը,
մանաւանդ թէ մանուկը, կարգէ զուրս
սպաւորութիւն մը կ'ընէ տեսնողին
սրտին վրայ : կը տեսնես անոր զգեստ-
ներուն հիւսուածքն ու վրայի բարդե-
րը, թեպանիքը՝ որով ծածկուած էին
զատտակքը, քանի մը տեղ պատրուած՝
որոց տակէն կ'երևայ մարմինն, և դոր
ծածած կոշկաց բանուածքն : կարծես
թէ անոր վերջին ժամը կը տեսնես, իբր
թէ հոն վեաւովին սպառնալեաց տակ
եղած ըլլար : զգեստը գլխին վրայ քա-
շած է, Դիւմեղեայ աղջկան պէս, և
կ'իմացընէ զգացած վախը : վագելու
ատեն երեսի վրայ գետին ընկած էր,
և չկրնալով վեր ելլել, մէկ ձեռքին վը-
րայ կ'սկսուցուած էր սկար գլուխը :
Չեռքին մէկը կիսաբաց մնացեր էր՝ իբր
թէ անով բան մը բռնած ըլլար, թե-
րևս քողքը՝ որով զինքը կը ծածկէր :
կը տեսնես որ մատուրներուն ոսկոր-

ները ծակճրկեր էին զգաճը, Գանկը փայլուն և մաքուր է, և սրունքը վրայէ վրայ: Խեղճ աղջիկը երկարատև նեղութիւն չէ ունեցած, տասնևհինգ տարուան աղջիկ մը, որուն կրածը տխուր ազդեցութիւն մը կ'ընէ այնչափ դարերէ ետքն ալ:

Չորրորդը հսկայաձև մարդու մը դիակն է: Կռնրի վրայ պառկած էր քաջութեամբ մեռնելու համար. իւր թևերն ու սրունքն ուղիղ են և անշարժ: Զգեստները խիստ որոշ կերպով կը տեսնուին. կոչիկներն աղէկ յարմար, ոտքին սանդաղները ժապաւինով կապած, և անոնցմէ մէկը ոտքին մատուրներէն ծակած: Մէկ մատին վրայ

երկաթէ մատանի մը կայ. բերանը բաց է, քանի մը ախռաները ելած. քիթն ու այտերը դեռ որոշ կը տեսնուին. աչուր ներն ու մազերն անհետացած են, բայց ոչ և ընչաքբը: Այս գեղեցիկ դիական վրայ պատերազմողի մը նկարագիրը կ'երևի: Յետ կանանց, որոնք մահուրնէ կը խորէին, մարգս աներկիւզ կ'երևի աւերակաց մէջ՝ որ զինքը կը ճնշեն: Հոս կը վերջացրնեմ խօսքս, վասն զի Պոմպէան ալ ասոր նման սրտայարժ տեսարան մը չկրնար ընծայել մեզի: Մահ բռնական՝ իւր կարգէ գուրս տանջանօքբը, մահ որ կը կրէ և կը կուռի՝ աւերակաց տեսարաններէն առնուած հազար ութ հարիւր տարի վերջը:

Կ Ո Ս Տ Ա Ն Գ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

ԷՏՄՈՆՏՈՅ ՏԷ ԱՄԻՉԻՍ ԻՏԱԼԱՅԻՈՅ

(Տես Պր. Բ. էջ 174):

ՊԱՐԻՍՊՔՆ

Ստամբուլի հին պարսպաց չորս կողմի պոստոն ուզեցի միայն ընել, և ամենայն իտալացոց որ պիտի երթան 'ի կոստանդնուպոլիս խորհուրդ կուտամ ինծի նմանելու, վասն զի մենաւոր մեծամեծ աւերակաց տեսին, բասուզիւ խորին և աւական տպաւորութիւն մը չթողուր՝ բայց եթէ 'ի նմա որ բողբոջին մտադիր է ընդունելու զայն, և 'ի լուծեան կրնայ ազատութեամբ իր խորհրդոց ընթացից ետեէն երթալ Գրեթէ հնգետասան իտալական մղոնի չըջապայութիւն մը կար ընելու, հետոնն, արեգակն ճառագայթից տակ, ամայի ճամբաներէ: — Թեքևա — ըսի բարեկամիս — մինչև ճանապարհին կէսը միայնութեան տխրութիւնը զայ վրաս և կանչեմ զքեզ օգնութեան իբրև Սուրբ մը. այլ վերջապէս կ'ուզեմ միայն երթալ: — Քասկս թեթևցուցի, որ չըլլայ թէ յանկարծ արուարձանեայ գող

մը ներսն ուզէ տեսնել. բան մը նետեցի և փափագող եղեգանց մէջ յետոյ ըսելու համար, — Ելու կեցիր, անիծեալ գայլ — և զիչերոյ մեղմ անձրեւէ մ'ելած գեղեցիկ երկնքի մը տակ ճամբայ ինկոյ առաւօտուան ութիւն գէպ 'ի վայիտէ Սուլդանի կամուրջն:

Իմ ծրարներս էր Ստամբուլէն ելլել Պլախերնեայց թաղին գոնէն, ընթանալ Ոսկեղբերէն մինչև Եօթն Աշտարակաց գղեպան եղած պարսպաց գիծն, և գառնալ Մարմարայի ծովուն եզերքէն, պտտելով այսպէս մահմետական քաղաքին ամբողջ մեծ եռանկեան չորս կողմն:

Անցնելով կամուրջն, աջակողմը դարձայ և յառաջեցի իտամպուլ-տիշաւը կոչուած ընդարձակ թաղն, որ քաղաքի երկայն գիծ մ'է, պարսպաց և նաւահանգստին մէջ պարփակեալ: